ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-109[1]-06.12.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր՝ 183.2 -րդ հոդվածով.

«**Հոդված 183.2. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման պահանջները խախտելը**

1. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով:»:

2. Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման, իջեցման և փոխանցման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով:

3. Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինսնապատիկի չափով:

4. Հայաստանի Հանրապետության դրոշի ընդօրինակման արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետում «183.1» թվից հետո լրացնել «, 183.2» թիվը:

Հոդված 3. Օրենսգրքի 254-րդ հոդվածի առաջին պարբերության 3-րդ կետում «182» թվից հետո լրացնել «, 183.2» թիվը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Պ-109[1]-06.12.2021-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր՝ 183.2 -րդ հոդվածով.

«Հոդված 183.2. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման պահանջները խախտելը

1. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածման՝ ~~«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-5-րդ կամ 8-րդ մասերով, ինչպես նաեւ 6-րդ հոդվածով սահմանված~~ պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ~~քաղաքացիների եւ~~ իրավաբանական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով:»:

2. Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման, ~~կամ~~ իջեցման և փոխանցման ~~՝ «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված~~ պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից հարյուրապատիկի չափով:

3. ~~«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով սահմանված~~ Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:

4. ~~«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված~~ Հայաստանի Հանրապետության դրոշի ընդօրինակման ~~պահանջը~~ արգելքը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:»:

~~***Հոդված 2.*** Օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի 2-րդ մասը պարբերությունը «169.16-րդ» բառերից հետո լրացնել «,183.2. -րդ» բառերով:~~

Հոդված 2. Օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետում «183.1» թվից հետո լրացնել «, 183.2» թիվը:

Հոդված 3. Օրենսգրքի 254-րդ հոդվածի առաջին պարբերության ~~-~~3-րդ կետում «182» թվից հետո լրացնել «, 183.2» թիվը:

Հոդված ~~3~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող ~~90-րդ~~տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (Պ-109-06.12.2021) նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
«Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»					
1	Հեղինակ	վերնագիր	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Հեղինակ	1-ին հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-149-Ն օրենքի 3-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում «(այդ թվում՝ Երեւանի քաղաքապետարանի)» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև հանրակրթական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, պետական գիտական, մարզական և մշակութային կազմակերպությունների, պետության և համայնքի կողմից հիմնադրված այլ իրավաբանական անձանց» բառերը. 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 5.1-ին մաս. «5.1. Հայաստանի Հանրապետության դրոշը Հանրապետության և Անկախության տոներին, ինչպես նաև Սահմանադրության և	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պետական խորհրդանիշների օրը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հրապարակների, փողոցների, այգիների և պուրակների հարակից վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա, որոնց ցանկը սահմանում է համայնքի ղեկավարը:»:		
3	Հեղինակ	2-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Կառավարությունը սահմանում է սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի կատարման ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1	Հեղինակ	Նախագիծ	Նախագծում կատարել փոփոխություններ՝ ըստ ներկայացված տեքստի:	Ընդունվել է:	Ընդունվել է: